

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Հաշվետվության բովանդակությունը</b>		<b>Էջը</b>
<b>1.</b>	<b>Նախաբան</b>	<b>2</b>
	<b><u>Ստուգումներ</u></b>	
	2.1. Երևան քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններ	<b>3</b>
<b>2.</b>	2.2. Երևան քաղաքի 4, ՀՀ Լոռու, Շիրակի մարզերի 3-ական, ՀՀ Արագածոտնի, Կոտայքի մարզերի 1-ական դպրոցներ	<b>6</b>
	2.3. ՀՀ 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	<b>18</b>
<b>3.</b>	<b><u>Ստուգայցեր</u></b>	<b>21</b>
<b>4.</b>	<b><u>Հետադարձ կապ</u></b> ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հաստատություններից 2020 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ	<b>21</b>
<b>5.</b>	<b><u>Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում</u></b>	<b>23</b>
<b>6.</b>	<b><u>Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ</u></b>	<b>24</b>
<b>7.</b>	<b><u>Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն</u></b>	<b>24</b>

# ՀՀ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) 2020 թվականի IV եռամսյակի գործունեությունը

## 1. Նախաբան

ԿՏՄ-ն 2020 թվականի IV եռամսյակում իրականացրել է ստուգումներ, ստուգայցեր, վարչական վարույթներ, խորհրդատվական, իրազեկման, աջակցման միջոցառումներ: Իրականացված գործառնությունների ընթացքում ԿՏՄ ծառայողների կողմից ապահովվել է արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված աշխատանքի կազմակերպման կանոնների պահանջների պատշաճ կատարումը:

Համաձայն 2020 թվականի ստուգումների ժամանակացույցի՝ 2020 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ն ստուգումներ պետք է իրականացնէր ՀՀ 35 ուսումնական հաստատություններում (10 նախադպրոցական (մանկապարտեզ), 15 հանրակրթական (դպրոց), 10 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական (քոլեջ) ուսումնական հաստատություններ), մինչդեռ ստուգումներ են իրականացվել 19 ուսումնական հաստատություններում (5-ը մանկապարտեզներ են, 12-ը՝ դպրոցներ, 2-ը՝ քոլեջներ):

2020 թվականի IV եռամսյակում ստուգված ՀՀ 19 ուսումնական հաստատություններից 16-ը (84%)՝ բարձր ռիսկային, 3-ը (16%)՝ միջին ռիսկային խմբերի ուսումնական հաստատություններ են: 16 բարձր ռիսկային խմբի ուսումնական հաստատություններից 5-ը մանկապարտեզներ են, 11-ը՝ դպրոցներ: 3 միջին ռիսկային խմբի ուսումնական հաստատություններից 1-ը դպրոց է, 2-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Նախադպրոցական կրթության ոլորտի ստուգված ուսումնական հաստատություններում միջին ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի կազմել է 10. 6, հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտի ուսումնական հաստատություններում՝ 6. 9: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում միջին ռիսկային միավորը 3. 15 է:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության իրավական ռեժիմով պայմանավորված՝ ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի հեռավար և առկա հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող դպրոցների հետ ԿՏՄ ծառայողների կողմից իրականացվել են ամենօրյա աջակցման և խորհրդատվական միջոցառումներ, որոնք ամենօրյա ռեժիմով ամփոփվել և համապատասխան գրություններով ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին, ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին՝ իրենց լիազորությունների շրջանակում բարձրացված խնդիրների շուտափույթ լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու առաջարկով:

Նախադպրոցական կրթության ոլորտում 1 ստուգման միջին տևողությունը IV եռամսյակում կազմել է 2 աշխատանքային օր, միջնակարգ կրթության ոլորտում՝ 3, միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 4 աշխատանքային օր:

2020 թվականի IV եռամսյակում միջնակարգ կրթության ոլորտում իրականացված ստուգումների ընթացքում, ՀՀ-ում առկա սուր շնչառական՝ կորոնավիրուսային վարակի պատճառով, ԿՏՍ կողմից սովորողներին գրավոր աշխատանքներ չեն տրվել:

Նշված ժամանակահատվածում ՀՀ ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ ԿՏՍ-ում ստացվել են 5 դիմում-բողոքներ:

Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ, աջակցման, խորհրդատվական հեռավար միջոցառումներ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՍ աշխատակիցների կողմից համատեղ 171 և 96 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 132 դպրոցներ և 90 մանկապարտեզներ:

## 2. Ստուգումներ

### 2.1. Երևան քաղաքի 5 նախադպրոցական ուսումնական հաստատություններ

#### Հիմքը՝

ԿՏՍ 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՍ ղեկավարի համապատասխան հրամանները:

#### Նպատակը՝

Մանկապարտեզների կողմից երեխայի տարիքային խմբին համապատասխան ուսումնադաստիարակչական գործունեություն ապահովելու նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելը (ըստ անհրաժեշտության՝ նաև հեռավար), ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելը, գնահատելը, տվյալների բազա ձևավորելը:

#### Ժամկետը՝

2020 թվականի IV եռամսյակ:

#### Ստուգմանը ընդգրկվող ժամանակահատվածը՝

2017 թվականի օգոստոսի 20-ից մինչև ստուգումը սկսելու օրը:

#### Ստուգման արդյունքները՝

2020 թվականի IV եռամսյակում ստուգումներ են իրականացվել Երևանի հ.հ. 109, 137, 142, 153, 160 մանկապարտեզներում:

Հաստատությունների կրթական գործունեության ստուգման արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

<i>Խախտման բնույթը</i>	<i>Նշված բնույթի խախտում կատարած մանկապարտեզների ընդհանուր թիվը</i>	<i>Մանկապարտեզի անվանումը</i>
<i>1. Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով չեն հաստկացվել պաշտոնային դրույքաչափերը</i>	<i>3(60%)</i>	<i>Երևանի հ.հ. 142, 153, 160 մանկապարտեզներ</i>
<i>1.1 Ֆիզկուլտուրայի հրահանգիչ</i>	<i>3(60%)</i>	<i>Երևանի հ.հ. 142, 153, 160 մանկապարտեզներ</i>

<b>2. Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով պակաս ևն հատկացվել պաշտոնային դրույքաչափերը</b>	<b>4(80%)</b>	<b>Երևանի հ.հ. 109, 137, 153 մանկապարտեզներ</b>
<b>2.1 Երաժշտական ղեկավար</b>	<b>3(60%)</b>	<b>Երևանի հ.հ. 109, 137, 160 մանկապարտեզներ</b>
<b>2.2 Մեթոդիստ</b>	<b>1(20%)</b>	<b>Երևանի հ.153 մանկապարտեզ</b>
<b>3. Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի խախտումով</b>	<b>1(20%)</b>	<b>Երևանի հ.137 մանկապարտեզ</b>
<b>4. Մանկապարտեզի խմբերի երեխաների խտությունը գերազանցում է սահմանված նորմատիվը</b>	<b>4(80%)</b>	<b>Երևանի հ.հ. 137, 142, 153, 160 մանկապարտեզներ</b>
<b>5. Մանկապարտեզի խմբում դպրոցահասակ տարիքի երեխայի ընդգրկվածություն</b>	<b>1(20%)</b>	<b>Երևանի հ.153 մանկապարտեզ</b>
<b>6. ՀՀ ԿԳ նախարարի՝ համապատասխան հրամաններով տրված նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սովորողների համակազմի սահմանային թվերի խախտում</b>	<b>3(60%)</b>	<b>Երևանի հ.հ.137, 142, 153 մանկապարտեզներ</b>
<b>7.Մանկավարժական աշխատողներին ներկայացվող պաշտոնային պարտականությունների չկատարում</b>	<b>3(60%)</b>	<b>Երևանի հ.հ. 142, 153, 160 մանկապարտեզներ</b>

Ինչպես ներկայացված է աղյուսակում՝ երաժշտության դաստիարակի հաստիքային միավորը սահմանվածից պակաս է հատկացվել 5 մանկապարտեզներից 3-ում (60%), մեթոդիստի հաստիքային միավորը՝ 1-ում (20%), չի հատկացվել ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքային միավոր՝ 3-ում (60%):

Մանկավարժական աշխատողների ընտրությունը և նշանակումը իրականացվել է սահմանված կարգի խախտումով 1 մանկապարտեզում: Խախտումով նշանակված 4 մանկավարժական աշխատողներից 1-ը մեթոդիստ է, 3-ը՝ լրացուցիչ կրթական ծառայությունների մանկավարժ:

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներն ըստ մանկապարտեզների ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

<b>Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ</b>	<b>Մանկապարտեզի անվանումը</b>
<b>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<b>II հոդվածի (վտի.՝ ՆՕ-267-Ն, 06.05.2020թ.) պահանջ II...նախադպրոցական տարիք՝ երեխայի մինչև 6 տարեկան հասակը)Ը:</b>	<b>Երևանի հ.153 մանկապարտեզ</b>
<b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառակավորման բնութագրեր»</b>	
<b>II գլխի 8-րդ կետի պահանջ.«տնօրենը ձևավորում է երեխաների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը»:</b>	<b>Երևանի հ.հ. 109, 137, 142, 153, 160 մանկապարտեզներ</b>
<b>III գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.«Նախադպրոցական ուսումնական հաստատության <u>մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի</u> պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն և</b>	<b>Երևանի հ.137 մանկապարտեզ</b>

վերջին յոթ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական աշխատանքի առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»:	
<b>IX գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.</b> «Նախադպրոցական ուսումնական հաստատության լրացուցիչ կրթության մանկավարժը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ. »:	<b>Երևանի հ.137 մանկապարտեզ</b>
<b>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն հրամանով (փոփ.՝ 16.11.2017թ., № 1318-Ն հրաման) հաստատված «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները»</b>	
<b>Հավելված 1-ի պահանջներ.</b> <b>ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակ</b>	<b>Երևանի հ.հ. 109, 137, 142, 153, 160 մանկապարտեզներ</b>
<b>Հավելված 2-ի պահանջներ.</b> <b>խմբերի խտություն, նորմատիվներ</b>	<b>Երևանի հ.հ.137, 142, 153, 160 մանկապարտեզներ</b>
<b>ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված՝ նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սահմանված սովորողների համակազմի սահմանային թվեր</b>	<b>Երևանի հ.հ. 137, 142, 153 մանկապարտեզներ</b>

Վերոնշյալ խախտումների հիմնական պատճառներից են՝

➤ տնօրենի կողմից իր պաշտոնային պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների ոչ լիարժեք տիրապետումը,

➤ համայնքի ղեկավարի կողմից կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների ոչ պատշաճ իրականացումը:

Նախատեսվածից պակաս հատկացված հաստիքային միավորների դեպքում մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման արդյունավետությունը միանշանակ նվազում է, իսկ չհատկացված հաստիքային միավորների պատճառով չեն կատարվում նրանց պաշտոնային պարտականություններով սահմանված գործառնությունները, որի հետևանքով խաթարվում է կրթական գործընթացի և՛ կազմակերպումը, և՛ իրականացումը, չեն ապահովվում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչի պահանջները:

**Ձեռնարկված միջոցառումները՝**

Ըստ ստուգումների արդյունքների՝ ստուգված բոլոր 5 մանկապարտեզներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 5 ակտ: Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով բոլոր մանկապարտեզների տնօրեններին տրվել են հանձնարարականներ՝ համաձայն տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրերի:

Հայտնաբերված խախտումների վերաբերյալ ակտերի պատճենները՝ համապատասխան գրություններով՝ ուղարկվել են Երևանի քաղաքապետին:

Երևանի քաղաքապետի տեղակալից ստացված գրության համաձայն՝ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ տնօրեններին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

**2.2. Երևան քաղաքի 4, ՀՀ Լոռու, Շիրակի մարզերի 3-ական, ՀՀ Արագածոտնի, Կոտայքի մարզերի 1-ական դպրոցներ**

## **Հիմքը՝**

ԿՏՄ 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

## **Նպատակը՝**

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից առավել որակյալ ուսուցում և ուսումնասրություն ապահովելու նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, տվյալների բազայի ձևավորումը:

## **Ժամկետը՝**

2020 թվականի IV եռամսյակ:

## **Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝**

2017 թվականի օգոստոսի 20-ից մինչև ստուգումն սկսելու օրը, իսկ *ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 24, հ. 18 և Ստեփանավանի հ. 6 միջնակարգ դպրոցների* համար մանկավարժական կադրերի և ուսումնական պլանների համար ստուգման ժամանակահատվածի սկիզբ է ընդունվել 2019 թվականի օգոստոսի 14-ը:

## **Ստուգման արդյունքները՝**

2020 թվականի IV եռամսյակում ստուգումներ են իրականացվել ՀՀ 12՝ 6 հիմնական, 4 միջնակարգ, 2 ավագ դպրոցներում (*Երևանի հ.հ. 74 հ/դ, 75 հ/դ, 129 հ/դ, 95 մ/դ, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ա/դ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի ա/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 11 հ/դ, 19 հ/դ, 32 հ/դ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ.հ. 18 մ/դ, 24 մ/դ, Ստեփանավանի հ. 6 մ/դ*):

Ստուգված 12 դպրոցներից 11-ի տնօրենները (92%) և 6 դպրոցների (50%) խորհուրդները սահմանված կարգով չեն իրականացրել իրենց լիազորությունները, ինչպես նաև 6 դպրոցներում (50%) արձանագրվել են միաժամանակ և՛ խորհրդի, և՛ տնօրենի գործունեությանը վերաբերող խախտումներ, մասնավորապես.

### **Դպրոցի ոչ իրավաչափ գործունեություն**

➤ Դպրոցի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրությանը կամ կանոնադրության մեջ չեն ներառվել օրինակելի կանոնադրության փոփոխությունները՝ 5 (42%) դպրոցներում (*Բյուրեղավանի ա/դ, Գյումրու հ.հ. 11 հ/դ, 19 հ/դ, 32 հ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ*):

➤ Դպրոցի տնօրենի պարտականությունները հանձնարարվել են տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալին, ով համարվել է խորհրդի անդամ՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

➤ Դպրոցի՝ մեկ դրույքով պաշտոնավարող տնօրենն ունի շաբաթական 14 դասաժամ ծանրաբեռնվածություն՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

### **Դպրոցի խորհրդի ոչ իրավաչափ գործունեություն.**

➤ Խորհրդի նախագահի ընտրությունն իրականացվել է բաց քվեարկությամբ՝ *Ստեփանավանի հ. 6 մ/դ-ում*:

➤ Խորհրդի անդամի լիազորության ժամկետը լրանալուց հետո նոր անդամի առաջադրումը կատարվել է սահմանված ժամկետի խախտմամբ (ծնողական)՝ *Գյումրու հ. 11 հ/դ-ում*:

➤ Ծնողական խորհրդից դպրոցի խորհրդի անդամների ընտրությանը մասնակցել են բոլոր դասարանների ծնողական խորհուրդների նախագահներն և անդամները՝ 2 (17%) դպրոցներում (*Գյումրու հ. հ. 19 հ/դ, 32 հ/դ*):

➤ Դպրոցի ծնողական խորհուրդն իր կազմից դպրոցի խորհրդի անդամ առաջադրել և ընտրել է դպրոցի գրադարանավարին՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

• Խորհուրդը չի հաստատել իր աշխատակարգը՝ **2 (17%)** դպրոցներում (*Գյումրու հ. 11 հ/դ, Մտեփանավանի հ. 6 մ/դ*):

➤ Խորհուրդը նիստերը չի գումարել սահմանված ժամկետում՝ **3 (25%)** դպրոցներում (*Բյուրեղավանի ա/դ, Երևանի հ. 95 մ/դ, Գյումրու հ. 11 հ/դ*):

➤ Խորհուրդը չի քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները՝ **2 (17%)** դպրոցներում (*Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ*):

➤ Խորհուրդը չի իրականացրել վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ՝ **2 (17%)** դպրոցներում (*Գյումրու հ. 11 հ/դ, Մտեփանավանի հ. 6 մ/դ*):

➤ Խորհուրդը չի իրականացրել վերահսկողություն տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ՝ *Գյումրու հ. 11 հ/դ-ում*:

➤ Խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար կայացած մրցույթը կազմակերպել է ընթացակարգային խախտումներով՝ **3 (25%)** դպրոցներում (*Երևանի հ. 75 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ*):

#### **Դպրոցի տնօրենի ոչ իրավաչափ գործունեություն**

➤ Դպրոցի հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակների քննարկումներ (այդ թվում՝ հանրային) չեն կազմակերպվել մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից՝ **2 (17%)** դպրոցներում (*Երևանի հ. 74 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ*):

➤ Դպրոցի տնօրենը չի կազմել դպրոցի բյուջետային օրացույց՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

➤ Դպրոցում ներքին գնահատում չի իրականացվել, հետևաբար արդյունքների վերաբերյալ տեղեկանքը տնօրենը չի ներկայացրել գործող խորհուրդների քննարկմանը, չի ապահովել դրա հրապարակումը՝ *Գյումրու հ. 19 հ/դ-ում*:

➤ Դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը չի համապատասխանում սահմանված նորմերին՝ *Գյումրու հ. 11 հ/դ-ում*:

➤ Մանկավարժական աշխատողի նշանակումը (ներառյալ՝ փոխարինումը) չի համապատասխանում մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերին (ներառյալ՝ ՆԶՊ-ի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները)՝ **8 (67%)** դպրոցներում՝ **45** մանկավարժական աշխատողներ, որոնցից **34-ը (76%)** ուսուցիչներ են (34 ուսուցիչ, 1 ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, 1 ԴԱԿ, 3 հատուկ մանկավարժ, 1 գրադարանավար, 5 ուսուցչի օգնական): Մանկավարժական աշխատողների սահմանված պահանջների խախտմամբ նշանակման ամենաշատ դեպքերն արձանագրվել են՝ *Գյումրու հ. 19 միջնակարգ և Բյուրեղավանի ավագ դպրոցներում, համապատասխանաբար՝ 11 և 9 մանկավարժական աշխատողների նշանակում (Բյուրեղավանի ա/դ (9), Երևանի հ. 74 հ/դ (4), Երևանի հ. 75 հ/դ (5), Երևանի հ. 129 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ (5), Գյումրու հ. 32 հ/դ (5), Գյումրու հ. 19 հ/դ (11), Գյումրու հ. 11 հ/դ (5))*:

➤ Ուսուցչի թափուր տեղի մրցույթը հայտարարվել է այն դեպքում, երբ դպրոցի տվյալ առարկայի ուսուցիչներն ապահովված չեն եղել **1** դրույք ծանրաբեռնվածությամբ՝ **2 (17%)** դպրոցներում (*Երևանի հ. 74 հ/դ, Գյումրու հ. 32 հ/դ*):

➤ Ուսուցչի թափուր տեղ առաջանալուց հետո մրցույթ չի հայտարարվել, թափուր դասաժամերը հատկացվել են առանց մրցույթի **2 (17%)** դպրոցներում (*Երևանի հ. 74 հ/դ (2), Երևանի հ. 75 հ/դ (2)*):

➤ Մրցույթները հայտարարվել են սահմանված ժամկետի խախտումով՝ **2 (17%)** դպրոցներում (*Բյուրեղավանի ա/դ, Երևանի հ. 95 մ/դ*):

➤ Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի հանձնաժողովը ձևավորվել է սահմանված ժամկետի խախտմամբ, հանձնաժողովի կազմում չի ընդգրկվել համապատասխան մեթոդական միավորման նախագահը՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

➤ Մինչև ուսուցչի թափուր տեղի մրցույթի կայանալը դասավանդել է ոչ մասնագետ՝ **7 (58%)** դպրոցներում **24** ուսուցիչ (ներառյալ ֆիզկուլտուրայի և ՆՁՊ-ի ուսուցիչներ), թվով ամենաշատ խախտումներն արձանագրվել են Բյուրեղավանի ավագ դպրոցում, որտեղ մինչև մրցույթի կայանալը դասավանդել են **9 (37,5%)** ոչ մասնագետներ (*Երևանի հ. 74 հ/դ (2), Երևանի հ. 75 հ/դ (5), Երևանի հ. 129 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ (3), Գյումրու հ. 11 հ/դ (2), Գյումրու հ. 19 հ/դ (2), Բյուրեղավանի ա/դ (9)*):

➤ Ուսուցչի թափուր տեղի մրցույթին մասնակցած և հաղթող ճանաչված անձի որակավորումը չի համապատասխանում ուսուցչի պաշտոնի նկարագրին՝ **4 (33%)** դպրոցներում **6** ուսուցիչ (*Երևանի հ. 74 հ/դ (2), Երևանի հ. 129 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ (2), Գյումրու հ. 19 հ/դ*):

Հարկ է նշել, որ ուսուցչի նշանակման խախտումները (ներառյալ՝ մինչև ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը) արձանագրվել են հետևյալ առարկաները դասավանդող ուսուցիչների մասով՝ մաթեմատիկա, ինֆորմատիկա, պատմություն, հայրենագիտություն, բնագիտություն, ռուսաց լեզու, անգլերեն, ես և շրջակա աշխարհը, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա, ՆՁՊ:

Դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպումը և նրա նկատմամբ վերահսկողությունը չի իրականացվել սահմանված կարգով:

Խորհրդակցական մարմինների (մանկավարժական և առարկայական մեթոդական միավորումների) գործունեությունը չի իրականացվել դպրոցի կանոնադրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատշաճ կարգով չի ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, պատասխանատու չի եղել ուսումնական ծրագրերի կատարման համար, մասնավորապես.

➤ Դպրոցի մանկավարժական խորհուրդը չի ձևավորվել սահմանված կարգով. ընդգրկված չէ դպրոցի ծնողական խորհրդի նախագահը, առկա չէ տնօրենի հրաման՝ *Երևանի հ. 74 հ/դ-ում*:

➤ Մանկավարժական խորհրդի նիստերը չեն գումարվել սահմանված ժամկետում՝ **2 (17%)**. Դպրոցներում (*Բյուրեղավանի ա/դ, Երևանի հ.95 մ/դ*):

➤ Դպրոցում չի ստեղծվել տարրական կրթության մեթոդական միավորում դասվարների համար՝ *Երևանի հ. 129 հ/դ-ում*.

➤ Դպրոցի առարկայական մասնախմբերը չեն քննարկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը՝ *Երևանի հ.95 մ/դ-ում*:

➤ 6-րդ դասարանում «Ազգային երգ ու պար» առարկան ուսումնասիրել են շաբաթական 1 դասաժամով (1,5 դասաժամի փոխարեն)՝ *Երևանի հ. 75 հ/դ-ում*:



➤ 10-րդ և 11-րդ դասարաններում երաշխավորված առարկայացանկից «Ձեռնարկատիրական կրթություն» առարկային դպրոցական բաղադրիչից հատկացվել է շաբաթական մեկական դասաժամ: Մինչդեռ, ըստ վերոնշյալ առարկայի ծրագրի նշված դասարաններում առարկայի դասավանդմանը հատկացվում է 68 ժամ` **2 (17%)** դպրոցներում (*Բյուրեղավանի ա/դ, Վանաձորի հ. 18 մ/դ*):

Տնօրենը սահմանված կարգով չի ձևավորել սովորողների համակազմը, մասնավորապես.

➤ Ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավել բացակայություն ունեցող սովորողը փոխադրվել է հաջորդ դասարան` *Բյուրեղավանի ա/դ-ում*:


➤ Դպրոցում գերազանցվել է լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային տեղերի թիվը` **5 (42%)** դպրոցներում (*Երևանի հ. 74 հ/դ, Բյուրեղավանի ա/դ, Գյումրու հ. 19 հ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ, Վանաձորի հ. 24 մ/դ*):

➤ Սովորողի դպրոց ընդունելությունն իրականացվել է սահմանված կարգի պահանջների խախտումով (դասարանի անհամապատասխանություն), որի հետևանքով չի ապահովվել կրթության շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողի զարգացման մակարդակին` **8 (67%)** դպրոցներում **18** սովորողներ (*Երևանի հ. 74 հ/դ (3), Երևանի հ. 75 հ/դ (3), Երևանի հ. 129 հ/դ, Գյումրու հ. 11 հ/դ (6), Երևանի հ. 95 մ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ (2), Վանաձորի հ. 24 մ/դ, Ստեփանավանի հ. 6 մ/դ*)

➤ Սովորողի անձնական գործում բացակայում է հիմնական կրթության վկայականը, սովորողի տեղափոխումը դպրոցից դպրոց իրականացվել է առանց տեղափոխման թերթիկի առկայության (ընդունում, տեղափոխում)` *Երևանի հ. 95 մ/դ*:

➤ Սովորողի անձնական գործում բացակայում է սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմում (ընդունում, տեղափոխում)` **2 (17%)** դպրոցներում (*Գյումրու հ. 19 հ/դ (2), Երևանի հ. 95 մ/դ (96)*):

Ելնելով վերոգրյալից` առանձնացվել են առավել հաճախ կրկնվող խախտումներն ըստ բնույթների (տե՛ս Գծապատկեր 1-ը).



Խախտվել են հետևյալ իրավական ակտերի պահանջները.

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	Դպրոցի անվանումը
---	------------------

<b>«Կրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<b>14-րդ հոդվածի 2-րդ մաս.</b> Ոչանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման յիսգորված մարմինը:]]	Երևանի հ. 75 հ/դ, Բյուրեղավանի ա/դ, Վանաձորի հ. 18 մ/դ
<b>32-րդ հոդվածի 1-ին մաս</b> «Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը դրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:» (ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի № 1641-Ն և 17.09.20 N 1535-Ն որոշումների պահանջներ):	Գյումրու հ. 11 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ, Գյումրու հ. 32 հ/դ, Բյուրեղավանի ա/դ, Վանաձորի հ. 18 մ/դ
<b>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք</b>	
<b>5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ.</b> «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին:»	Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ. 74 հ/դ, Երևանի հ. 75 հ/դ, Երևանի հ. 129 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ, Վանաձորի հ. 24 մ/դ, Ստեփանավանի հ. 6 մ/դ
<b>7-րդ հոդվածի 7-րդ մաս.</b> «Հանրակրթական ծրագրերի յուրացման արդյունքներն ամփոփվում են կրթական յուրաքանչյուր աստիճանի ավարտին: Հանրակրթական ծրագրի նախորդ աստիճանը չյուրացրած սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթության հաջորդ աստիճան:»	Բյուրեղավանի ա/դ
<b>11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:»	Երևանի հ.95 մ/դ, Գյումրու հ. 11 հ/դ
<b>11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:»	Երևանի հ.95 մ/դ, Գյումրու հ. 11 հ/դ
<b>11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը:»	Գյումրու հ. 11 հ/դ, Ստեփանավանի հ. 6 մ/դ
<b>11-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը:»	Գյումրու հ. 11 հ/դ, Ստեփանավանի հ. 6մ/դ
<b>12-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ.</b> «Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք:»	Գյումրու հ. 19 հ/դ,
<b>16-րդ հոդվածի 2-րդ մաս.</b> «Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն արգելվում է:»	Վանաձորի հ. 18 մ/դ
<b>16-րդ հոդվածի 7-րդ մաս.</b> «Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման յիսգորված մարմնի սահմանած կարգով:»	Երևանի հ. 74 հ/դ
<b>24-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համարվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման յիսգորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ ... »	Երևանի հ. 74 հ/դ (2), Երևանի հ. 75 հ/դ (2)
<b>25-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Գես դրույքով պաշտոնավարող և համապատասխան	Գյումրու հ. 11 հ/դ

որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:»	
<b>25-րդ հոդվածի 4-րդ մաս.</b> «Ուսական ուսումնական հաստատության մեկ դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:»	Երևանի հ. 75 հ/դ
<b>26-րդ հոդվածի 1-ին մաս.</b> «Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:»	Երևանի հ. 74 հ/դ (3), Գյումրու հ. 19 հ/դ (5), Գյումրու հ. 32 հ/դ (1), Երևանի հ.95 մ/դ (4), Երևանի հ.129 մ/դ (1), Բյուրեղավանի ա/դ (1)
<b>34-րդ հոդվածի 2-րդ մաս.</b> «Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները:»	Գյումրու հ. 19 հ/դ
<b>34-րդ հոդվածի 3-րդ մաս.</b> «Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը:»	Երևանի հ. 95 մ/դ, Գյումրու հ. 11 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ
<b>«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀօրենք</b>	
<b>9.1-րդ հոդված.</b> «Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է:»	Գյումրու հ. 11 հ/դ, Գյումրու հ. 32 հ/դ
<b>ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրեր»</b>	
<b>3-րդ գլխի 1-ին կետի 1-ին ենթակետ.</b> «Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու է հաստատությունում ուսումնական ծրագրերի կատարման համար:»	Երևանի հ. 75 հ/դ, Բյուրեղավանի ա/դ, Վանաձորի հ. 18 մ/դ
<b>4-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով տեղակալի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:»	Գյումրու հ. 11 հ/դ
<b>6-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ:»	Գյումրու հ. 11 հ/դ
<b>8-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժության որակավորմամբ:»	Գյումրու հ. 19 հ/դ (3)
<b>11-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության <b>գինդեկի</b> պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, սպայական կոչում:»	Գյումրու հ. 32 հ/դ
<b>12-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին	Գյումրու հ. 32 հ/դ

մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:»	
<p><b>14-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «1) Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն և վերջին տաս տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.</p> <p>2) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և սովյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ (1), Երևանի հ. 95 մ/դ (1), Գյումրու հ. 32 հ/դ (1), Գյումրու հ. 19 հ/դ (2)</b></p>
<p><b>ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն» (Հավելված 3)</b></p>	
<p><b>24-րդ կետ.</b> «Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշիչն և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:»</p>	<p><b>Բյուրեղավանի ա/դ</b></p>
<p><b>33-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ</b></p>
<p><b>33-րդ կետի 7-րդ ենթակետ.</b> «Խորհուրդը քննարկում է ... ուսումնադաստիարակչական գործունեության ... մասին հաշվետվությունները:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ.95 մ/դ</b></p>
<p><b>33-րդ կետի 8-րդ ենթակետ.</b> «Դպրոցի խորհուրդը քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ</b></p>
<p><b>33-րդ կետի 9-րդ ենթակետ.</b> «Դպրոցի խորհուրդը վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Մտեփանավանի հ. 6 մ/դ</b></p>
<p><b>36-րդ կետ.</b> Սխորհրդի անդամը դպրոցի տնօրենի պաշտոնակատար լինել չի կարող: ▯</p>	<p><b>Երևանի հ. 74 հ/դ</b></p>
<p><b>41-րդ կետ.</b> «Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ...»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ.95 մ/դ, Բյուրեղավանի ա/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը՝ դրանում առանձին տողով ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 8-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը ...8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ ...իրականացնում է ... <b>մանկավարժական և այլ կադրերի... ընտրությունը...</b>»</p>	<p><b>Երևանի հ. 129 հ/դ (1), Երևանի հ. 74 հ/դ (4), Երևանի հ. 75 հ/դ (5), Երևանի հ. 95 մ/դ (5), Գյումրու հ. 11 հ/դ (5), Գյումրու հ. 32 հ/դ (5), Բյուրեղավանի ա/դ (9), Գյումրու հ. 19 հ/դ (11)</b></p>
<p><b>48-րդ կետի 17-րդ ենթակետ.</b> «Տնօրենն ապահովում է դպրոցում գործաճության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը:»</p>	<p><b>Երևանի հ. 95 մ/դ</b></p>
<p><b>48-րդ կետի 18-րդ ենթակետ.</b> «Դպրոցի տնօրենը սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ. 74 հ/դ,</b></p>

	<p>Երևանի հ. 75 հ/դ,  Երևանի հ. 129 հ/դ,  Երևանի հ. 95 մ/դ,  Բյուրեղավանի ա/դ,  Վանաձորի հ. 18 մ/դ,  Վանաձորի հ. 24 մ/դ,  Ստեփանավանի հ. 6 մ/դ</p>
<p><b>51-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, բյուջեի հաստատման և կատարման մասին հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով տնօրենը կազմում է դպրոցի բյուջետային օրացույց՝ հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝ բյուջեի նախագծի քննարկումների, այդ թվում՝ հանրային, կազմակերպման ու լրամշակման (սեպտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 15-ը):»</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>
<p><b>53-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում տնօրենը բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացնում է՝ բյուջեի նախագծի հանրային քննարկման կազմակերպումը՝ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար.»</p>	<p>Երևանի հ. 95 մ/դ</p>
<p><b>53-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Տնօրենը բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում տնօրենը բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացնում է բյուջեի նախագծի քննարկումը մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով:»</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ,  Երևանի հ. 95 մ/դ</p>
<p><b>69-րդ կետ.</b> «Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին, իսկ անհնարինության դեպքում՝ այլ անձի, ով դպրոցի խորհրդի անդամ չէ:»</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>
<p><b>76-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:»</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>
<p><b>80-րդ կետի 7-րդ ենթակետ.</b> «Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին:»</p>	<p>Գյումրու հ. 11 հ/դ</p>
<p><b>80-րդ կետի 8-րդ ենթակետ.</b> «Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում սովորողների վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու:»</p>	<p>Բյուրեղավանի ա/դ</p>
<p><b>83-րդ կետ.</b> «Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:...»</p>	<p>Երևանի հ. 95 մ/դ,  Բյուրեղավանի ա/դ</p>
<p><b>92-րդ կետ.</b> «Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:»</p>	<p>Երևանի հ. 129 հ/դ</p>
<p><b>93-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «Առարկայական մեթոդական միավորումը քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը:»</p>	<p>Երևանի հ. 95 մ/դ</p>
<p><b>ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի № 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»</b></p>	
<p><b>2-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝</p>	<p>Երևանի հ. 75 հ/դ,  Վանաձորի հ. 18 մ/դ</p>

<p>խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:»</p>	
<p><b>21.1-րդ կետ.</b> Ուսարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ընտրությանը կարող են մասնակցել նախապես գրանցվելով:Ս</p>	<p><b>Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p><b>21.2-րդ կետ.</b> ՍՄրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրատարակելու օրվանից մինչև փաստաթղթերի ընդունման վերջին օրը հասարակական կազմակերպությունները կամ զանգվածային լրատվության միջոցներն իրենց ներկայացուցիչներին որպես դիտորդ գրանցելու համար կարող են պաշտոնապես դիմել հաստատության խորհրդի նախագահին՝ նշելով հասարակական կազմակերպությունը ներկայացնող անձի կամ լուսաբանող լրագրողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև կցելով հասարակական կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը, կազմակերպության վերջին երեք տարվա գործունեության հակիրճ նկարագրությունը:Ս</p>	<p><b>Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p><b>21.4-րդ կետ.</b> Սխորհրդի նախագահը սույն կարգի 21.2-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում որոշում է ընդունում դիտորդ գրանցելու կամ մերժելու մասին՝ այդ մասին տեղեկացնելով (գրավոր կամ էլեկտրոնային փոստով) կազմակերպությանը: Մերժման հիմք կարող է հանդիսանալ հասարակական կազմակերպության գործունեության անհամապատասխանությունը սույն կարգի 21-րդ կետում նշված պահանջին:Ս</p>	<p><b>Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p><b>ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի № 439-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների»</b></p>	
<p><b>8-րդ գլխի 1-ին կետի ՈրՍ ենթակետ.</b> Ուստ նպատակադրման կիրառում են գնահատման հետևյալ ձևերը՝ ամփոփիչ գնահատում (ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրաքանչյուր աստիճանը):Ս</p>	<p><b>Բյուրեղավանի ա/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի ձևավորման կարգ»</b></p>	
<p><b>11-րդ կետ.</b> «Հաստատության ծնողական խորհուրդն իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է Հաստատության Խորհրդի 2 անդամ:»</p>	<p><b>Գյումրու հ. 32 հ/դ</b></p>
<p><b>11.1-րդ կետ.</b> Ուստատության խորհրդի կազմում ՀՀ կրթության և գիտության նախարարության, լիազորված մարմնի և ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել տվյալ ուսումնական հաստատությունում սովորողի այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ:Ս</p>	<p><b>Երևանի հ. 74 հ/դ</b></p>
<p><b>15-րդ կետ.</b> «Օրենքով սահմանված դեպքերում՝ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20-օրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու՝ համաձայն սույն կարգի:»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ</b></p>
<p><b>19-րդ կետ.</b> «Խորհուրդը փակ քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»</p>	<p><b>Ստեփանավանի հ. 6 մ/դ</b></p>
<p><b>20-րդ կետ.</b> «Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ ըստ հաստատված ժամանակացույցի ...»</p>	<p><b>Գյումրու հ. 11 հ/դ, Երևանի հ. 95 մ/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված՝ «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի» կարգ</b></p>	
<p><b>2-րդ կետ.</b> ՍԹափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված՝ ուսուցչի չգրադեցրած պաշտոնը:Ս</p>	<p><b>Երևանի հ. 74 հ/դ, Բյուրեղավանի ա/դ</b></p>
<p><b>4-րդ կետ.</b> Ս Հաստատությունում մրցույթ հայտարարվում է տվյալ առարկան դասավանդող ուսուցչին 1 դրույթ ծանրաբեռնվածությամբ ապահովելուց հետո:Ս</p>	<p><b>Երևանի հ. 74 հ/դ (1), Գյումրու հ. 32 հ/դ (1)</b></p>
<p><b>5-րդ կետ.</b> «Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում:...»</p>	<p><b>Երևանի հ. 95 մ/դ,</b></p>

<p><b>6-րդ կետ.</b> «Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չձևանալվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի Հաստատություններում՝ նաև ուսուցիչ որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները:»</p>	<p>Երևանի հ. 129 հ/դ (1), Գյումրու հ. 19 հ/դ (2), Երևանի հ. 74 հ/դ (2), Գյումրու հ. 11 հ/դ (2), Երևանի հ. 95 մ/դ (3), Երևանի հ. 75 հ/դ (5), Բյուրեղավանի ա/դ (9)</p>
<p><b>15-րդ կետ.</b> «Մրցութային կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:»</p>	<p>Երևանի հ. 129 հ/դ (1), Երևանի հ. 95 մ/դ (2), Երևանի հ. 74 հ/դ (2)</p>
<p><b>20-րդ կետ.</b> «Մրցութային հանձնաժողովը ձևավորվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:»</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>
<p><b>21-րդ կետ.</b> Ընտանաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնագիտության դեկան, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ:[]</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի. N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ»</b></p>	
<p><b>3-րդ կետ.</b> «Սովորողի ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:»</p>	<p>Երևանի հ. 95 մ/դ</p>
<p><b>10-րդ կետ.</b> «Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառություն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա:»</p>	<p>Երևանի հ.95 մ/դ, Երևանի հ. 74 հ/դ, Վանաձորի հ. 18 մ/դ, Վանաձորի հ. 24 մ/դ</p>
<p><b>15-րդ կետի 9-րդ ենթակետ.</b> «Սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս):»</p>	<p>Երևանի հ.95 մ/դ</p>
<p><b>15-րդ կետի 10-րդ ենթակետ.</b> ««Հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ 10-12-րդ դասարաններ ընդունվելիս:»</p>	<p>Երևանի հ.95 մ/դ</p>
<p><b>16-րդ կետ. (փոփ. 15.05.2020թ. N 06-ն հրաման).</b> []Սույն կարգի 19-րդ կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառություն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Սույն կարգի 19-րդ կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության անհամապատասխանության դեպքում՝ սովորողի ուսումնառությունը կազմակերպվում է մեկ դասարան բարձր (բացառությամբ 9-րդ դասարանի) կամ ցածր (կրթության տևողությունը 12 տարուց ավելի լինելու դեպքում):[]</p>	<p>Ստեփանավանի հ. 6 մ/դ</p>
<p><b>16-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝ ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա...»</p>	<p>Երևանի հ.95 մ/դ</p>
<p><b>19-րդ կետի 1-ին ենթակետ.</b> []«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝ մինչև 8 տարեկանը՝ 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով:[]</p>	<p>Երևանի հ. 74 հ/դ</p>

<p><b>20-րդ կետի 1-ին ենթակետ (փոփ. 15.05.2020թ. N 06-ն հրաման).</b> «Սովորողի ազատույնը դպրոցից կատարվում է՝ ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա:»</p>	<p><b>Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p><b>20-րդ կետ.</b> Սույն կարգի 18-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 10-րդ կետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: ... Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան...»</p>	<p><b>Երևանի հ. 75 հ/դ</b></p>
<p><b>24-րդ կետ (փոփ. 15.05.2020թ. N 06-ն հրաման).</b> «Սույն կարգի 23-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի, 14-րդ և 16-րդ կետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդափափորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար:»</p>	<p><b>Երևանի հ. 129 հ/դ, Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի N 25-Ն հրամանով հաստատված Ոչանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները</b></p>	
<p><b>20-րդ կետի 3-րդ ենթակետ.</b> Ուսխարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է... «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը՝ Նախարարության կողմից հաստատվելուց հետո:»</p>	<p><b>Վանաձորի հ. 18 հ/դ</b></p>
<p><b>47-րդ կետի 2-րդ ենթակետ.</b> Սկզբնական դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ... «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը՝ Նախարարության կողմից հաստատվելուց հետո:»</p>	<p><b>Բյուրեղավանի ա/դ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով հաստատված հանրակրթական ծրագրերով կրթական գործունեության լիցենզիայի պայման (սովորողների համար նախատեսված սահմանային թիվ)</b></p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 19.06.2013թ. N 835-Ս/Ք հրաման</p>	<p><b>Երևանի հ. 74 հ/դ</b></p>
<p>ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 23.07.2020թ. N 942-Ս/2 հրաման</p>	<p><b>Գյումրու հ. 19 հ/դ</b></p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 15.07.2011թ. N 814-Ս/Ք հրաման</p>	<p><b>Վանաձորի հ. 18 մ/դ</b></p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 30.05.2011թ. N 617-Ս/Ք հրաման, ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 01.06.2020թ. N 671-Ս/2 հրաման</p>	<p><b>Վանաձորի հ. 24 մ/դ</b></p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 17.07.2010թ. N 1120-Ս/Ք հրաման (փոփ.՝ 06.09.2019թ.)</p>	<p><b>Բյուրեղավանի ա/դ</b></p>

**Ձեռնարկված միջոցառումները՝**

Ըստ ստուգումների արդյունքների՝ 12 դպրոցներից 11-ում, բացառությամբ՝ Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոցի, հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 11 ակտ:



Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ դպրոցների տնօրեններին (տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին), Երևանի քաղաքապետին, ՀՀ Շիրակի, Լոռու մարզպետներին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍ) նախարարին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները, Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոցի տնօրենին՝ տեղեկանքի մեկ օրինակը:

Երևանի քաղաքապետին, ՀՀ Շիրակի, Լոռու մարզպետներին առաջարկվել է քննարկել ստուգման արդյունքները, ձեռնարկել համապատասխան միջոցներ և արդյունքների մասին տեղեկացնել տեսչական մարմնին:

ՀՀ Շիրակի մարզպետին գրությամբ տեղեկացվել է նաև, որ ՀՀ կառավարության 21.11.2019թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի № 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 1641-Ն որոշմամբ կատարված փոփոխություններն ամրագրված չեն դպրոցի կանոնադրության մեջ: Առաջարկվել է իրականացնել համապատասխան փոփոխությունները և ապահովել կանոնադրության սահմանված կարգով հաստատումը:

Խախտումների հետևանքները վերացնելու և արդյունքների մասին տեսչական մարմնին տեղեկացնելու առաջարկով գրություններ են ներկայացվել Երևանի հ. 95, Ստեփանավանի հ. 6 միջնակարգ, Գյումրու հ. 11 հիմնական դպրոցների խորհուրդների նախագահներին:

### **2.3. ՀՀ 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ**

#### **Հիմքը՝**

ԿՏՍ 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՍ ղեկավարի համապատասխան հրամանները:

#### **Նպատակը՝**

Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կառավարման և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստելը, հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելը:

#### **Ժամկետը՝**

2020թ. IV եռամսյակ:

#### **Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝**

Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել 2018 թվականի սեպտեմբերի 1-ից (ընդունելության գործընթացի համար՝ 2018 թվականի հունիսի 1-ից) մինչև ստուգումը սկսելու օրը:

#### **Ստուգման արդյունքները՝**

2020 թվականի 4-րդ եռամսյակում ստուգումներ իրականացվել են 2 քոլեջներում՝ *Արմվանի բազմագործառնությանի պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ* (այսուհետ՝ նաև հաստատություն):

Հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

Հաստատության խորհրդի ոչ իրավաչափ գործունեության վերաբերյալ խախտումներ են արձանագրվել Աբովյանի բազմագործառնության պետական քոլեջի ստուգման արդյունքում: Մասնավորապես.

- խորհրդի նիստերը գումարվել են սահմանված ժամկետների խախտմամբ,
- խորհրդի անդամների (ուսանողական կազմից) լիազորությունների դադարեցումը և թափուր տեղի համալրումը իրականացվել են կարգով սահմանված ժամկետների խախտմամբ,
- խորհրդի անդամների (մանկավարժական աշխատողների և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչներ) համալրումը իրականացվել է սահմանված կարգի պահանջների խախտումով:

Տնօրենի ոչ իրավաչափ գործունեությանը վերաբերող խախտումներ են արձանագրվել 2 հաստատություններում: Մասնավորապես.

**Ուսանողի ընդունելության և իրավունքի վերականգնման գործընթացներն** իրականացվել են սահմանված կարգի խախտումով *Աբովյանի բազմագործառնության պետական քոլեջում՝*

- գորակոչային տարիք ունեցող դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին չի ներկայացրել սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը (կցագրման վկայականները),
- հաստատության տնօրենն ուսումնական կիսամյակների ավարտին լիազորված մարմին չի ներկայացրել ուսանողի ուսանողական իրավունքի վերականգնման վերաբերյալ հաշվետվություն, և (կամ) վերականգնված ուսանողների հետ նոր պայմանագրեր չեն կնքվել:

**Ուսանողի տեղափոխման գործընթացն** իրականացվել է սահմանված կարգի խախտումով 2 հաստատություններում՝

- հաստատության տնօրենն ուսումնական տարվա ավարտին լիազորված մարմին չի ներկայացրել ուսանողների տեղափոխման վերաբերյալ հաշվետվությունը,
- ուսանողի տեղափոխման հրամանագրումը կատարվել է սահմանված ժամկետի խախտումով, ինչպես նաև տեղափոխման հրամանագրումը կատարվել է առանց տնօրենի համաձայնության նշագրումի *Աբովյանի բազմագործառնության պետական քոլեջում,*
- ուսանողի տեղափոխումը տնօրենն իրականացրել է առանց ժամանակավոր հրամանի՝ *Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջում:*

Ստուգման արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների հետևյալ խախտումները.

<i>Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ</i>	<i>Հաստատության անվանումը</i>
<i>ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների» օրինակելի կանոնադրություն՝ Հավելված N 3</i>	
<i>33-րդ կետ. «Մորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան թափուր տեղ առաջանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:»</i>	<i>ՀՀ ԿԳՄՄՆ ՄԱբովյանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</i>
<i>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի N 124 հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ»</i>	

<p><b>5-րդ կետի 1-ին ենթակետ.</b> «Հաստատության մանկավարժական կազմից Խորհրդի անդամության թեկնածուներ է առաջարկում Հաստատության մանկավարժական կազմի ընդհանուր ժողովը. 1) Հաստատության մանկավարժական կազմի ընդհանուր ժողովի կողմից առաջադրված անձանց թեկնածությունները ներկայացվում են պետական կառավարման լիազորված մարմին...»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>8-րդ կետ.</b> «Գրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչներ կարող են առաջադրվել. 1) պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ 10 տոկոս, 2) սոցիալական գործընկերներ՝ 25 տոկոս, 3) տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ 10 տոկոս:»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>13-րդ կետ.</b> «Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում...»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի N 254 հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»</b></p>	
<p><b>19-րդ կետի 5-րդ ենթակետ.</b> «Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցիչ (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝ կցագրման վկայական (գորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չգորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում) ...»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառություն անսկսող անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգ»</b></p>	
<p><b>8-րդ կետ.</b> «Ակադեմիական կամ հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդից վերադարձած կամ պարտադիր զինվորական ծառայությունից գորացրված ուսանողի հետ երեք օրվա ընթացքում կնքվում է նոր պայմանագիր, որի պայմանները ուսանողի համար չեն կարող լինել նվազ բարենպաստ, քան նախորդ պայմանագրի պայմաններն էին:»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>23-րդ կետ.</b> «Ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողի հետ կնքվում է պայմանագիր, նրա համար կազմվում է նոր անձնական գործ, որտեղ ընդգրկվում են նաև սույն կարգի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, իսկ ուսանողին տրվում է ուսանողական տոմս, առաջադիմության գրքույկ և նրա հետ կնքած պայմանագրի երկրորդ օրինակը:»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>26-րդ կետ.</b> «Հաստատությունը՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին, Լիազորված մարմնին է ներկայացնում ուսանող(ներ)ի ուսանողական իրավունքի վերականգնման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով ուսանողական իրավունքի վերականգնման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի N 1455-Ն հրամանով հաստատված «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման» կարգ</b></p>	
<p><b>9-րդ կետ.</b> «Ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին պետական կառավարման լիազոր մարմնին է ներկայացնում ուսանողների տեղափոխման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:»</p>	<p><b>ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝ ՊՈԱԿ</b></p>
<p><b>11-րդ կետ.</b> «Ուսանողը դիմում է այն ուսումնական հաստատություն, ուր ցանկանում է տեղափոխվել և ներկայացնում է՝ 1) տեղափոխման մասին</p>	<p><b>«ՀՀ ԿԳՄՄ ՍԱբույանի բազմագործառնության պետական քոլեջ՝</b></p>

դիմումը՝ տնօրենի համաձայնության նշագրումով, 2) ակադեմիական տեղեկանքը...»	<b>ՊՈԱԿ</b>
<b>12-րդ կետ.</b> «Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը, համաձայնության դեպքում, տալիս է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որում նշվում են ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույց:»	<b>ՀՀ ԿԳՄՄՆ «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ</b>
<b>15-րդ կետ.</b> «Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը համապատասխան փաստաթղթերի բնօրինակները ստանալուց հետո էռոյա ժամկետում հրամանագրում է ուսանողին:»	<b>ՀՀ ԿԳՄՄՆ ՍԱբոյանի բազմագործառնության պետական քոլեջ ՊՈԱԿ</b>
<b>17-րդ կետ.</b> «Ընդունող ուսումնական հաստատությունում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ, որում ընդգրկվում են ուսանողի կրթության մասին վկայող փաստաթուղթը, ակադեմիական տեղեկանքը, ընդունման հրամանի պատճենը և ուսանողի հետ կնքած պայմանագիրը:»	<b>ՀՀ ԿԳՄՄՆ ՍԱբոյանի բազմագործառնության պետական քոլեջ ՊՈԱԿ</b>

**Ձեռնարկված միջոցառումները՝**

Ըստ ստուգումների արդյունքների՝ ստուգված 2 հաստատություններում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **2 ակտ**:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ հաստատությունների տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: ՀՀ ԿԳՄՄ նախարարությանը տրամադրվել են ակտերի պատճենները:

ՀՀ ԿԳՄՄ նախարարին առաջարկվել է քննարկել ստուգման արդյունքները և տեղյակ պահել տեսչական մարմին:

Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ստուգված 2 հաստատություններից հանձնարարականներ տրվել են մեկին՝ *Աբոյանի բազմագործառնության պետական քոլեջի* տնօրենին՝ համաձայն տեսչական մարմնի ղեկավարի կարգադրագրի:

**3.Ստուգայցեր Երևան քաղաքում գործող հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում**

**Հիմքը՝**

ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 11-Ա հրամանը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և ԿՏՄ ղեկավարների համատեղ հրամանները:

**Ժամկետը՝**

2020 թվականի IV եռամսյակ:

**Ստուգայցերի արդյունքները՝**

2020 թվականի IV եռամսյակում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ 171 և 96 ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 132 դպրոցներ և 90

մանկապարտեզներ: 4 հաստատություններում արձանագրված խախտումները շտկելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

#### 4. Հետադարձ կապ

**ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հաստատություններից 2020 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ**

ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում տրված հանձնարարականների կատարման ժամկետները 2020 թվականի IV եռամսյակում լրացել են ՀՀ 13 ուսումնական հաստատությունների (1 դպրոցներ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ) դեպքում: Ստացված կատարողականների վերաբերյալ պատկերն այսպիսին է.

**Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում** տրված հանձնարարականների կատարման ժամկետը IV եռամսյակում լրացել է 10 մանկապարտեզների դեպքում: Մասնավորապես.

N	Մանկապարտեզը	Հանձնարարականը				Կատարված հանձնարարականներ				Չկատարված հանձնարարականներ			
		Կատրվեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Նյլ	Կատրվեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Նյլ	Կատրվեր	Հաստիքներ	Գերբեռնվածություն	Նյլ
1	«Ջունիոր Քլաբ» մանկական կենտրոն» ՍՊԸ	1			1	1*		1					
2	Էջմիածնի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ		1	1			1			1			
3	Էջմիածնի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզ		1	1	1		1	1		1			
4	Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ			1	3						1	3	
5	Վանաձորի թիվ 11 մանկապարտեզ		1	1	1		1	1		1			
6	Վանաձորի թիվ 32 մանկապարտեզ		1	1	1		1	1		1			
7	Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ	2		1	1		1		2			1	
8	Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ		1	1	1		1	1		1			
9	Օձունի մանկապարտեզ	2	1	1	6		1	4	2	1		2	
10	Փոքր Մանթաշի մանկապարտեզ	1	1	1	5	1*		2		1	1	3	
<b>Ընդամենը</b>		<b>6</b>	<b>7</b>	<b>9</b>	<b>20</b>	<b>2*</b>	<b>0</b>	<b>7</b>	<b>11</b>	<b>4</b>	<b>7</b>	<b>2</b>	<b>9</b>
		<b>42</b>				<b>18+2*</b>				<b>22</b>			

Ինչպես ներկայացված է աղյուսակում՝ 10 մանկապարտեզներին տրված 42 հանձնարարականներից կատարվել են 18-ը (43%), ընթացքի մեջ են 2-ը (5%), չեն կատարվել 22-ը (52%): Մասնավորապես.

✓ կադրային խախտումներին վերաբերող 6 հանձնարարականներից 2-ի կատարումն ընթացքի մեջ է (խախտումով նշանակված անձն ազատվել է պաշտոնից, սակայն համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձ դեռևս չի նշանակվել), 4-ը (67%)՝ չի կատարվել:

✓ հաստիքային միավորներին վերաբերող 7 հանձնարարականները չեն կատարվել:

✓ խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող 9 հանձնարարականներից կատարվել են 7-ը (78%), չի կատարվել՝ 2-ը (22%):

Կադրային խախտումներին վերաբերող հանձնարարականների չկատարումը հիմնականում պայմանավորված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների սակավությամբ, համայնքների համապատասխան որակավորում ստացած մասնագետների՝ համայնք չվերադառնալով, աշխատավարձի ոչ բավարար լինելով: Հաստիքային միավորներին վերաբերող հանձնարարականների չկատարումը պայմանավորված է համապատասխան լիազոր մարմնի կողմից ոչ լիարժեք հատկացված ֆինանսական միջոցներով: Խմբերում սաների գերբեռնվածությանը վերաբերող հանձնարարականների դեպքում պատճառը թե՛ ֆինանսական միջոցներն են, թե՛ շենքային պայմանները:

**Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում** ԿՏՍ ղեկավարի կողմից 2020 թվականի IV եռամսյակը սահմանվել է որպես ստուգված դպրոցների տնօրեններին տրված հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանանի միջնակարգ դպրոցի համար: Հանձնարարականը վերաբերում էր դպրոցի կանոնադրությունը օրինակելի կանոնադրության պահանջներին համապատասխանեցմանը: Ըստ նշված դպրոցի տնօրենի կողմից սահմանված ժամկետում ներկայացված կատարողականի՝ հանձնարարականի կատարումն ընթացքի մեջ է:

**Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում** տրված հանձնարարականների կատարման ժամկետը IV եռամսյակում լրացել է 2 միջին մասնագիտական հաստատությունների դեպքում՝ **Վանաձորի Ս. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ:**

Նշված հաստատությունների տնօրեններին տրված 1-ական հանձնարարականները վերաբերել են՝

➤ վերականգնված ուսանողների հետ (որոնք դեռ չեն ավարտել) սահմանված կարգով նոր պայմանագրերի կնքմանը (**Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ**)

➤ 2020-2021 ուսումնական տարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով 0212.02.5 «Պարարվեստ» մասնագիտության տևողությունը և ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. մարտի 3-ի № 221-Ս/2 հրամանով հաստատված լիցենզիան ՀՀ կառավարության 12.01.2006թ. №73-Ն որոշմամբ հաստատված ցանկով սահմանված ժամկետին (2 տարի) համապատասխանեցնելուն (**Վանաձորի Ս. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ**):

Համաձայն սահմանված ժամկետներում ներկայացված կատարողականների վերաբերյալ գրությունների՝ հանձնարարականները կատարվել են:

**5. Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում (վարչական վարույթներ)**

## **Նպատակը՝**

ԿՏՄ հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգի պահանջների ապահովում:

## **Ժամկետը՝**

2020 թվականի IV եռամսյակ:

## **Դիմումներն ըստ մարզերի և ուսումնական հաստատությունների**

2020թ-ի 4-րդ եռամսյակում ԿՏՄ-ում ՀՀ ուսումնական հաստատություններից ստացվել են դիմում-բողոքներ **5** ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ (**ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի պետական քոլեջ, Երևանի հ. 104 հիմնական և ՀՀ Սյունիքի մարզի Հալիձորի միջնակարգ դպրոցներ, Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիր հիմնադրամ, և «ԼՕԼՕ» ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն**):

**5** դիմում-բողոքներից 4-ում բարձրացված հարցերը ԿՏՄ լիազորություններից դուրս են եղել, **1-ը՝** կարճվել է:

## **6. Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ**

### **Հիմքը՝**

ԿՏՄ 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

### **Նպատակը՝**

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների կատարում:

### **Ձեռնարկված միջոցառումներ**

ԿՏՄ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության աշխատակիցների կողմից իրականացվել է հեռավար խորհրդատվական հանդիպում (22.12.2020 թ.) Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանի, Սյունիքի տարածաշրջանային պետական, Կապանի պետական բժշկական, Արարատի տարածաշրջանային պետական, Վարդենիսի «Բադեյան» պետական, Գեղարքունիքի տարածաշրջանային պետական, Գավառի պետական երաժշտական, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական և Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջների տնօրենների մասնակցությամբ: Քննարկվել են ԿՏՄ կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերին, ՆՄՄԿ ոլորտի վերահսկողական գործառույթների շրջանակին և ստուգումների ընթացքում հաճախ հանդիպող խախտումներին վերաբերող հարցեր: Անդրադարձել են նաև համավարակի և ռազմական դրության պատճառով ոլորտում առաջացած խնդիրներին և դրանց հնարավոր լուծման եղանակներին:

ԿՏՄ ղեկավարի տեղակալը, որակի ապահովման բաժնի պետը մասնակցել են խորհրդատվական գործընթացին՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

## **7. Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն**

ԿՏՄ կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարության առաջարկով լրացումների և փոփոխությունների առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել

✓ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման,

✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2012 թվականի մայիսի 18-ի N 496-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի,

✓ ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.04.2011թ. «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրեր» N 416-Ն հրամանի լրամշակված,

✓ ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանի լրամշակված,

✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «Պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը սահմանելու մասին» հրամանի,

✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «ՀՀ ԿԳ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,

✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» հրամանի լրամշակված,

✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ «ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի

նախագծերի վերաբերյալ:

Ստուգումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով ԿԳՄՍ նախարարին առաջարկվել է.

✓ Սահմանել օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա 1-ին կիսամյակի ամփոփիչ գնահատում չունեցող սովորողին ուսումնական պարապմունքների ավարտին հանձնելու քննություններ և ստուգողական աշխատանքներ, որոնք կհանդիսանան 1-ին կիսամյակի ամփոփիչ գնահատականներ և 2 կիսամյակների գնահատականների միջինացման արդյունքում կձևավորվի սովորողի տարեկան գնահատականը:

✓ ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.04.2013 թ. «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ» N 396-Ն հրամանով հաստատված հավելվածի 6-րդ կետի՝ Ո6. Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթը կայանալու... Ո և 15-րդ կետի՝ Ո15. Մրցույթին կարող է մասնակցել...Ո պահանջներում ավելացնել հետևյալ ձևակերպումը Ո...նան՝ միջին մասնագիտական կրթություն և համապատասխան որակավորում ունեցող անձը, որը կարող է շարունակել իր մասնագիտական գործունեությունը մինչև «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի անցումային դրույթների պահանջով սահմանված ժամկետի լրանալը ....Ո:



✓ ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010 թ. «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ» N 1640-Ն հրամանով հաստատված հավելված.

- ավելացնել նոր կարգավորում, որը հնարավորություն կտա ազգային փոքրամասնությանը պատկանող ծնողին ինքնուրույն կատարելու ուսուցման լեզվի ընտրությունը, եթե նրա երեխայի ծննդյան վկայականում նշված չէ վերջինիս ազգությունը:

- 24-րդ կետի պահանջում ավելացնել 15-րդ և 17-րդ կետերի պահանջները: Փոփոխությունը հնարավորություն կտա 1-4-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ՀՀ վերադառնալիս ուսումը հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում շարունակելու գործընթացի կազմակերպմանը:

- 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջում []... 9-ից 15 տարեկան պահանջը փոխել 9-ից 17 տարեկան (հիմնական կրթության վկայական չունեցող) ...[] պահանջով: Այս փոփոխությունը հնարավորություն կտա մինչև 17 տարեկան հիմնական կրթության վկայական չունեցող, հանրակրթությունից դուրս մնացած կամ ուսումն ընդհատած սովորողներին դպրոցում շարունակելու ուսումը և ստանալու հիմնական կրթության վկայական (առանց էքստեռն կարգի):

Այսպիսով, ելնելով ԿՏՄ կողմից իրականացված վերահսկողական գործառնությունների, կանխարգելիչ միջոցառումների արդյունքներից՝ կրթության բնագավառում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները բացառելու նպատակով ՀՀ ուսումնական հաստատությունների լիազոր մարմիններին առաջարկվում է՝ ուսումնական հաստատությունների տնօրեններին հանձնարարել ուսումնական հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնել բացառապես կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*ՌԳՄՊՎԳ վարչություն*